19.08.2021
347-96

Երևանի քաղաքապետ
Հայկ Մարությանին

Տեղեկություն ստանալու **կրկնակի** հարցում

Հարգելի պարոն Մարության,

Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է օրենքով սահմանված կարգով՝ (...) 3) տեղեկություններ փնտրող անձին տրամադրել հավաստի և իր տնօրինության տակ գտնվող ամբողջական տեղեկություն:

Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների ու կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը սահմանելու մասին ՀՀ կառավարության 2015 թվականի N 1204-Ն որոշման Հավելված 2-ի 8-րդ կետի համաձայն՝ **հարցման պատասխանը պետք է լինի հավաստի և լրիվ՝ պարունակելով բոլոր առաջադրված հարցերի հիմնավոր պատասխանները: Դիմողի կողմից մեկից ավելի հարցերի առաջադրման դեպքում պետական մարմինը հերթական համարակալման միջոցով տրամադրում է բոլոր հարցերի հավաստի և լրիվ պատասխանները:**

2021 թվականի օգոստոսի 12-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը հարցում էր ուղարկել Երևանի քաղաքապետարան (հարցումը կցվում է), որին 2021 թվականի օգոստոսի 19-ին Երևանի քաղաքապետարանը տրամադրել է թերի պատասխան՝ չպահպանելով Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքի եւ ՀՀ կառավարության 2015 թվականի N 1204-Ն որոշման վերոնշյալ դրույթների պահանջները, չի պատասխանել մեր հարցմամբ ներկայացված հարցերից ոչ մեկին (պատասխանը կցվում է):

Ուստի, առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածներով և Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով ևս մեկ անգամ դիմում ենք Ձեզ՝ խնդրելով ստորև նշված հարցերին տրամադրել **լիարժեք** պատասխան՝ տրամադրելով յուրաքանչյուր հարցին համարժեք ամբողջական պատասխան:

1.10.08.2021թ. թիվ 19/98733 գրությամբ Քաղաքապետարանը ԻԱԿ-ին տեղեկացել է, որ չունի անօրինական գործող քարի արտադրամասի գործունեությունը դադարեցնելու լիազորություն: Խնդրում ենք տեղեկացնել, թե որ պետական մարմնի լիազորությունն է համայնքի հողին պատկանող տարածքում անօրինական գործողարտադրամասի գործունեության կասեցումը կամ դադարեցումը:

Ինֆորմացիայի ազատության կենտրոն (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի փող. 1/3,4-րդ հարկ, Հեռ+37491407836, էլ. հասցե՝foi@foi.am Կայք՝www.foi.am

2. Ունի՞ արդյոք քարի արտադրամասի տնտեսվարողը (ՄԻՔԱՅԵԼ ՂԱԶԱՐՅԱՆՍԵՐԳԵՅԻԱ/Զ-ն) համայնքային հողի օրինական օգտագործման կամ վարձակալության պայմանագիր քաղաքապետարանի կամ Աջափնյակի թաղապետարանի հետ, թե՞ նա պարզապես զավթել է համայնքին պատկանող հողը:

3. Ինչու՞ է Երևանի քաղաքապետարանը դրսևորել անգործություն, և անգամ Հեղափոխությունից հետո՝ մինչև 2021թվականի ապրիլի 30-ը, համայնքին պատկանող հողի վրա 10 տարուց ավելի անօրինական գործունեություն ծավալող քարի արտադրամասը չի քանդել կամ ապամոնտաժել:

Տեղեկություն ստանալու հարցումը տեղեկություն փնտրելու և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով տեղեկատվություն տնօրինողին ուղղված դիմում է (տես Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը), ուստի, սույն կրկնակի հարցումը Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին ՀՀ օրենքի տեսանկյունից **բողոք է**: Ուստի, Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի իմաստով սույն կրկնակի հարցումը (բողոքը) քննարկման է ենթակա վերադասության կարգով՝ ոչ այն վարչության կողմից, որը տրամադրել է մեր հարցման թերի պատասխանը (հարցման թերի պատասխանը ստացել էինք Երեւանի քաղաքապետարանի քաղաքաշինության եւ հողի վերահսկողության վարչությունից): **Ուստի, սույն կրկնակի հարցումը չպետք է մակագրվի այն պաշտոնյային, ում տրամադրած պատասխանը բողոքարկում ենք**:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու **կրկնակի** հարցմանը պատասխանել Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով 5-օրյա ժամկետում:

Ուշադրություն: Խնդրում ենք հարցմանը պատասխանել բացառապես **էլեկտրոնային եղանակով:**

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան